Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4178
4179
4180
4181
4182
4183

9(47.925)
U-33

1. Մատթէոս Կարոզիկոս։ Հաւատոյ խոստովանութեան ուղղափառաց դաւանանաց գրոց։ Մոսկվա 1861
2. Օրմանեան Մ. եպ. Արդի հայաստանեայց վարդապետութիւն. 1886
3. Գանձակեցւոյ վրդ. Բարձրաբերդ։ Յաղագս դրդռոյն պատրիարքացն երուսաղէմի Գ. Դարձ. 1872.
4. Եղեռնագրեր։ Ս. Եղիշէի մայր աթոռի և ռուսաց կաթ. հայրապ. ծաղ. թ-1905
5. Շահ-Ազատեանց դ. Ս. Հայոց եկեղեցու վարչութիւնը և Ցուցակ։ Մ-1909

6. Կանոնագիրք և վայելուչ գրութիւն պատմութիւնք ու տեսութիւնք Ս. Պետերբուրգ 1872

200

Printed in Turkey

965

898
Մ-35
9(47.925)
Մ-33

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ

Printed in Turkey

ԴԱՇԱՆՑ

ԹՂԹՈՅՆ

Հրտ՝ Մատթէոս Յարթուրեան

Ի ՄՈՍԿՈՒԱ.
Въ Типографіи Каткова и К°.
1861

12913

P—311

3101
39

Printed in Turkey

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ

ԴԱՇԱՆՑ ԹՂԹՈՅՆ

Զոր Կոստանդինոս Մեծ ընծայեալ է Հռովմայ և Ս. Սիղբեստրոս Հայրապետն Հռովմայ դուռն են մեր Տրդատ Խոսրովին և Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին։

—

ՑԱՌԱՋԱԲԱՆ։

,,Հարցջիր դու ցհարս քո՝ և պատմեսցեն քեզ, ցծերս քո՝ և ասասցեն քեզ,,։
Բ. օրէն. ԼԲ. 7։

Արդարև ով որ կուզէ ու կըաղձայ ազգային պատմութեան մը ստուգութիւնը քննելու և իմանալու, անշուշտ առաջին փոյթը պիտի ըլլայ օտար ազգաց կարծիքական գրութիւններուն տուած շփոթութիւնը մերժելու, և մանաւանդ աչառութեամբ և կողմնասիրութեամբ գրուած խօսքերը հերքելու, և ապա ազատամիտ ոգւով պիտի քննէ զանի նոյն իսկ ազգային վաւերացեալ ժամանակագրութենէն, որպէս զի նոյն ազգին արժանահաւատ վկայեալ անձինքներէն մատենագրուած ու ստուգուած ըլլայ։

Որովհետև ամէն մէկ ազգ իւր ազգային վիպասանութեան ու դիպուածոցը առաւել ծանօթացած կըլլայ քան թէ օտարին, ըստ ասածին թէ «Առաւել գիտէ տխմարն 'ի տան իւրում, քան իմաստունն 'ի տան այլոյ, ասոր համար և Պալմէթ մեկնիչ իրաւունք ունեցաւ սուրբ գրոց վրայով խորհրդածութիւն ընելու ժամանակ

(Յեսուայ Ժ. 7.) այսպէս գրելու. «Յայնս՝ որք վերաբերին առ վեպասանութիւն իւրաքանչիւր ազգի կամ աշխարհի, պարտ է անսալ այնոցիկ՝ որք են 'ի նմին ազգէ կամ յաշխարհէ, բարոյապէս համարձակեալ յայն կարծիս, թէ նոքա լաւագոյն ևս տեղեկացեալ են իւրեանց սեպհական անցից քան զայլ ոք օտարազգի»։

Ուրեմն այն Ագոնոնդեղոս անուամբ մեր եկեղեցական մատենագրութեան վերջը գրուած ստուգապատում Դաշանց Թղթոյն վերայով անտեղի կարծիքական խորհրդով և կողմնակցութեան կրիւք գրուածները և գայթակղութիւնները կրմերժուին այս տեղ, և վաւերական գրութիւններէն արժանահաւատ անձանց հաստատուելով՝ անոր ստուգութիւնը հաճելի պիտի ըլլայ ճշմարտասէր և ազատամիտ ազգայնոցս, որում բարեմասնութեանը համար կամ ճնամ յաւէտ անձնանուէր աղօթարար առ Տէր Յիսուս Քրիստոս։

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ։

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

—

Այս Դաշանց թուղթը անժխտելի երդմամբ հաստատեցին իւրեանց մէջը Կոստանդիանոս կայսրն Հռովմայ և Տրդատ թագաւորն մեր և սուրբն Սեղբեստրոս հայրապետն Հռովմայ և սուրբ Գրիգոր՝ լուսաւորիչ Հայրապետն մեր*, երբ որ հոգեւոր փառաւորութեամբ սիրակցութիւն և խնդակցութիւն կընէին՝ անձամբ իսկ տեսութիւն ընելով միմեանց հետ՝ի Հռովմ։ Զասն զի կուրախանար կայսրն Կոստանդիանոս հոգեզուարճ ցնծութեամբ՝ Տրդատ թագաւորին նորահաստատ հաւատացեալ ըլլալուն վրայով. նոյնպէս Տրդատ թագաւորն ալ կուրախանար հոգեպարար բերկրանօք՝ Կոստանդիանոսին քրիստոնէական հաւատով լուսաւորուելոյն վրայով. և երկու առաքելապատիւ և բազմարդիւն Արբազան Հայրապետներն ալ իրենց աստուածահաճոյ վաստակներուն և հոգեբուղխ աւետարանական քարոզութեանց պտուղներուն վրայով կզմայլէին, ինչպէս գրեն ստուգապատում մատենագիրք։

Զայս կստուգէ Ագաթանգեղոս ատենադպիրն Տրդատայ. «Ապա իբրև լուաւ զայս ամ, կ'ըսէ, մեծ արքայն Հայոց (Տրդատ), խորհուրդ առնոյր վասն ճանապարհացն այնոցիկ, հանդերձեալ կազմէր առնոյր ընդ իւր զմեծ Եպիսկոպոսն Գրիգոր և զնո-

---

* Գիտել արժան է, զի այս Դաշանց թուղթս յետ ժամանակաց անհմուտ կամ խարդախամիտ օրինակագիրների ձեռքով տեղ տեղ պլպլլուած և խանգարուած է՝ տարադէպ յաւելուածներ իւր մէջ ընդունելով, ինչպէս կիստոսովանին անաչառապէս և Միքայէլ Զամչեան ('ի Պատմ. Հայ. հատ. Ա. էջ 10 և 643) և Ղուկաս Ինճիճեան ('ի Հնախօս. Հայաստ. հատ. Գ, էջ 258. 'ի Ծանօթ.)։ Իսկ մեր այս աշխատութեան նպատակը՝ պիտի ըլլայ միայն հոլովաբար բնագրին ստուգութիւնը հաստատել՝ ցուցանելով արժանահաւատ մատենագրաց վկայութեամբք, թէ կեղծիք չէ այն, այլ՝ ճշմարիտ։

բուն որդին Ուրստակէս եպիսկոպոս և զմիւս եպիսկոպոսն զԱղբիանոս... Եւ այլ բազում մեծամեծք, և եօթանասուն հազարաւ ընտիր զօրուն հանդերձ՝ խաղայր գնայր յԱյրարատ գաւառէ 'ի Վաղարշապատ քաղաքէ... Զոր իբրև լուաւ աստուածակարգ թագաւորն պատուական աթոռոյն Կոստանդիանոս, և Հայրապետան մեծ արքեպիսկոպոսն աշխարհամուտ Գրանն՝ որում անուն կոչէր Սեղբեստրոս, որք մեծաւ սիրով պատիւ արարեալ ընդ առաջ ելանէին. և տուեալ հանդիստ՝ շնորհս ունել ժամանակս ինչ անդէն 'ի տիեզերական քաղաքին։ Ապա զարմացեալ աստուածասէր կայսրն Կոստանդիանոս՝ հարցանելով զարքային Տրդատ, թէ զիարդ որպէս առ քեզ եղեն Աստուծոյ սքանչելիքն...։ Վասն որոյ զարմացեալ կայսրն Կոստանդիանոս, խոնարհեցուցեալ զանձին՝ անկանէր առաջի սրբոյն Գրիգորի, զի օրհնեսցի 'ի նմանէն. և բազում վայելուչ մեծարանօք պատիւ արարեալ նմա, իբրև խոստովանողի Քրիստոսի ըստ արժանաւորութեան նորա»։

«Այնպէս և արքային Տրդատայ՝ իբրև եղբօր սիրելւոյ 'սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեան նորա առաւել, դաշինս կռէր ընդ նմա, միջնորդ կալեալ զհաւատն՝ որ 'ի Տէր Քրիստոսն էր. զի անշուշտ մինչ 'ի բուն զհաւատարիմ սէրն 'ի մէջ թագաւորութեանցն պահեսցեն. զի և քան զնս առաւելագոյն արքայն Հայոց հաստատէր 'ի յԱրքորդութիւն 'ի հաւատն, պատմէր և վասն վկայիցն Աստուծոյ, թէ որպէս, և կամ զի՞նչ օրինակ վկայեցին...։ Ապա յետ այնորիկ մեծարեալ լինէին դարմանօք մեծապատիւ շքեղութեանն կարգօք յարքունեացն և յեկեղեցեացն, և 'ի պատուական իշխանաց քաղաքին. և մեծամեծ պատարագք և երևելի պարգևօքն պատուեալ սիրով»։ (Ագաթան. տիպ Վենետ. էջ 646—651)։

Տես և ընթերցիր Զենոբայ եպիսկոպոսի աշակերտի սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ այս մասին ըրած պատմագրութիւնը (եր. 25. 75—92)։ Խորենացի (Ռ. ձդ)։ Ստեփաննոս Ասողիկ (Ռ. ա.)։ Եւ աւելորդ մի՛ համարեր լսել նաև Յովհաննէս Պատմաբան Կաթողիկոսին վկայութիւնը, որ այսպէս կը գրէ։ «Յետ այսորիկ ապա գնացեալ ևս ընդ արքային Տրդատայ յԱստուածակարգ կայսրն Կոստանդիանոս՝ բազմօք իմն և նազելի և վայելուչ մեծարանօք պատուէ զսուրբ Հայրապետան իբրև զկենդանի մարտիրոս առաջի անկանելով և աղօթս նուիրականս և օրհնութիւնս

'ի նմանէ հայցելով։ Եւ այսպէս զնա պատուասիրեալ և Տրդատաւ հանդերձ հանեալ յոսկիապատ կառս՝ մեծաւ շքեղութեամբ յուղարկէ զճանապարհայն» (տիպ Մոսկուայի յէջ 24)։

Եւ և մեր Շնորհալին Ներսէս գրէ ('ի Վիպաս. յԿ և յՀ)։

«Զկոստանդեայ դարձն լուեալ,
Որ էր Հռովմայ թագաւորեալ։
Յայն ճանապարհ զբոլոր ելեալ.
Եղեռնասուն հազար ընտրեալ։
Յառաքելոցն յաթոռ հասեալ,
Սուրբ ոսկերացն երկրպագեալ։
'Ի յարքայէն պատուասիրեալ,
Հայրապետէն սիրով պատուեալ։
Գրիգորիոս վկայ եղեալ,
Խոստովանող վերընկալեալ։
Եւ զՏրդատ փառաւորեալ,
Որպէս հրաշիւք փոխակերպեալ։
Քրիստոսական կրօնիւք խրատեալ,
Եւ 'ի հաւատս հաստատեալ։
'Ի յուխտ դաշանց միաբանեալ,
Թագաւորացն երկուց եղեալ»։

Այս սիրակցութեան և ուրախակցութեան մէջը տակաւին մէկզմէկէ անձամբ և տեղով չի մեկնելով, միաբան և միասիրտ հաստատեցին այս Դաշանց թուղթը՝ հոգևորական և քաղաքական իրաց և դիպուածոց և գործողութեանց վրայով սահմաններ և օրէնքներ դնելով։ Վասն զի այն տեղ հանդիսացեալ էին գլխաւորապէս երկու բազմարդիւն առաքելայաջորդ Սրբազան և գերընտիր Հայրապետներ, այսինքն սուրբն Սեղբեստրոս Հայրապետն Հռովմայ և սուրբն Գրիգոր Հայրապետն մեր. և երկու աստուածասէր և մեծահաւատ թագաւորք, Կոստանդիանոս և Տրդատիոս։

Այս ամենը յայտնի կերևի ազատամիտ բանասիրաց առջևը, երբ որ առանց կրից կարդալու ըլլան այն Դաշանց թուղթը՝ որն որ գրած է Տրդատ թագաւորի ատենադպիրն՝ ստուգապատումն Եգաթանգեղոս։ Այս գրքին վերջը կըտեսնուի՝ եթէ հաւատարիմ գրիչէ օրինակուած ըլլայ, և եթէ առանց կողմնակցութեան տըպուած ըլլայ։

Ապաքէն թող այս տեղս յայտնի երևան ելլեն ճշմարտապէս և ստուգաբան վկայներնիս, և հաստատեն այս թուղթին ստուգու-

թիը, մերժելով այլ և այլ կարծիքներն ու սխալ մեկնութիւնները։

Նաև սուրբ Վրթանէս աստուածաբեալ Հայրապետիս կը հաստատէ իւր այն թուղթին մէջ՝ որ գրեց իրեն եպիսկոպոսներովը և ազգիս նախարարներովը մեծին Կոստանդիանոսի որդւոյն Կոստանդ կայսեր, խնդրելով որ Տրդատայ որդին Խոսրովը Հայաստանի վրայ թագաւորեցնելու ջանադիր ըլլայ օգնականութիւն հասցնելով. որպէս զի Հայաստան ապահով և ազատ մնայ Պարսից բռնաւորութենէն և ուրիշ թշնամիներէ. վասն որոյ այսպէս գրեց. «Եպիսկոպոս Վրթանէս և ողք ընդ նովաւ եպիսկոպոսունք և ամենայն նախարարք Հայոց մեծաց, Տեառն մերոյ Կոստանդեայ կայսեր ինքնակալի խնդալ։ Յուշ լեցի քեզ պայման ուխտի հօրն քո Կոստանդիանոսի, որ առ մերում թագաւորին Տրդատայ. և մի՛ տացես զաշխարհն քո Պարսից անաստուածից, այլ օգնեսցես մեզ զօրօք՝ թագաւորեցուցանել զորդի Տրդատայ զԽոսրով և այլն. (Խոր. Գ. Ե)։

Այսպէս ալ Դաշանց թուղթին վկայութիւն և հաստատութիւն չէ՞ մի մեր Եղիշէ սուրբ վարդապետին գրածը, որն որ Փոքր Թէոդոս կայսեր ուղղած է սուրբ և երջանիկ կաթուղիկոսն մեր Յովսէփ՝ աղաչելով որ օգնութիւն ընէ Հայաստանու Վարդանանց քաջամարտիկ զօրավարաց, որ քաջ արիութեամբ ախոյեան քրիստոնէական հաւատոյ կային ընդդէմ Պարսից, և կրտաձնապէին համայն ազգայինք մեր յայնժամ եկեղեցականք և աշխարհականք յերեսաց չարաչար խարդախութեան ամենաթշուառ ուրացելոյն Վասակայ։

Ահա այս խնդրանաց թուղթին և կայսերական կողմանէ քննութեանը մէջ կը յայտնուի Դաշանց թուղթին հաստատութիւնը. ինչպէս գրած է. «Յովսէփ եպիսկոպոս բաղում եպիսկոպոսակցօք իմովք և ամենայն զօրք Հայոց... առ մեծանուն Թէոդոս կայսր, բազմասցի ողջոյն մեր առ քեզ». և յետոյ յիշեցուցանել կուտայ Դաշանց թուղթը չէշտաբար անունով այսպէս. «Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանն զառաքինի նախնեացն ձերոց» և այլն և այլն։

Այս խնդրանաց թուղթը առ կայսրն Թէոդոս մատուցանելէն զկնի, սկսան քննելու չէշտաբար անունով ցուցուած Դաշանց թուղթը, որ ---- հաստատութեան ալ կըսեր. վասն որոյ այսպէս գրուած է. «Եւ իբրև յանդիման եղեն (հրեշտակք Հայոց) մեծի

թագաւորին, և ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և ղյեշոպոխրանն նախնեացն, բազում մատեանք 'ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ՈՒԽ ՀՈՍՊՈՍՈՒԹԻՆ 'ի ներքս գտանէին». (Եղիշէ յէջ 54. 55 նոր տպ.):

Այս ստուգապատում Դաշանց Թուղթին՝ մեր Տրդատ արքային ատենադպիր Ագաթանգեղոսին իսկապէս գրիչ ըլլալը կը հաստատէ Մովսէս Խորենացի սուրբ վարդապետնիս: Որովհետև երբ կսկսի ծանօթութիւն տալ երանելի Նունէի վրայ, որ սրբոց Հռիփսիմեանց ընկերներէն մէկն էր (որ քրիստոնէութիւնը համարձակ և անվեհեր քարոզելուն համար՝ Ասորեստան աղ անուանեցաւ), վկայութիւն կբերէ Ագաթանգեղոսէն՝ ըսելով. «Զոր համարձակիմք ասել (թէ՝ Նունէ) Առաքելուհի եղեալ՝ քարոզեաց 'ի Կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասպից մինչև 'ի սահմանս Մազքթաց, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (Ռ. գիրք. Պրակ. ձԷ):

Այն այս վկայութիւնը՝ որ կբերէ Ագաթանգեղոսէն Խորենացի սուրբ վարդապետնիս, բնաւ չեմք գտնար Ագաթանգեղոսի ընդհանուր պատմութեանը մէջ, այլ միայն կրկարդամք անոր գրիչէն ելած Դաշանց Թուղթին մէջը: (Տես Ագաթ. երես 340. տիպ Կոստանդն.):

Այս տեղը թէ որ մէկը իւր կարծիքը հաստատելու համար ըսէ, որ երկու թագաւորք քաղաքական իրաց համար դաշնակցութիւն ըրին իրարու հետ, և ոչ թէ երկու հայրապետներն ալ իրենց մէջ սիրոյ Դաշինք մը դրած ըլլան, և այլն և այլն: Ձկարծեմք, սիրելի ընթերցողք, որ այս երկու աստուածազօր և մեծահաւատ երանելի թագաւորներն միայն մարմնաւորները և քաղաքականը վայելչացնելու և հաստատելու փոյթ ունէին, և կամ իրենց թագաւորութիւնը ընդարձակելու և ապահով ընելու կրջանային, այլ մանաւանդ հոգևորը առաւել կը ցանկային հաստատել: Այսն զի գիտէին ու քաջ սորված էին թէ՝ «Հոգի առաւել է քան ըզմարմին»: Եկեղեցւոյն Քրիստոսի առաւել փափագողք էին, և Քրիստոնէական հաւատոյ տարածմանը փոյթ ունէին. և քրիստոնէից աղատութեանը՝ սիրակցութեանը և միաբանութեանը ցանկացողք էին. արտաքուստ արքայական ծիրանեօք երևէին, բայց և ներքուստ առաքինութեամբք քրիստոսազգեաց էին: Այսն որոյ խորհրդակից ունէին այս երկու թագաւորները՝ Կոստանդիանոս

և Տրդատ՝ իրենց հոգևոր առաջնորդները, այսինքն՝ այն երկու Հայրապետները՝ սուրբն Սեղբեստրոս Հռովմայ, և սուրբն Գրիգոր մեր լուսաւորիչը: Ասոնցմով այն Դաշանց թուղթը առաւել հոգևոր ուխտերով կնքեցին քան թէ քաղաքական դաշնադրութեամբ: Ահա ասոր համար այս վերնագիրը ունի այն Դաշանց թուղթը. «Թուղթ սիրոյ և հաշտութեան ընդ կայսերն Կոստանդինոսի և սուրբ պապին Սեղբեստրոսի և Տրդատայ թագաւորին և սրբոյն Գրիգորի»:

Ուրեմն, ազատամիտ եղբայր, թող խելքերնիս առնէ ճշմարտասիրութեամբ՝ որ այս դաշնադրութիւնս միայն քաղաքական իրաց վրայով չէր, այլ հոգևոր քրիստոնէավայել սիրակցութեամբ, և աստուածահաճոյ բարեպաշտութեան և քրիստոսական անժխտելի և խոստովանելի հրամանին վրայով էր, որն որ սաստիկ կրկնատուիրէ Քրիստոս սուրբ Աւետարանաւ. «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս: Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս» (Յովհ. ԺԳ. 34—35):

Այլ կարդա, ազգասէր ընթերցող, այն Դաշանց թղթին պատճառը, և հասկնաս՝ որ Քրիստոնէական սիրոյն առիթովը հաստատուած է, և ոչ ուրիշ պատճառի համար, ինչպէս որ գրուած է. «Կամաք Աստուծոյ և միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին և սուրբ Առաքելոցս և ամենայն Սրբոցս, երկոքին Արքայքս և երկոքին Հայրապետքս և երկոքին ազգքս, Հռովմայեցիք և Հայք, միաբան և միախորհուրդ համաշունչ եղբարք գրեցաք միմեանց, և ուխտս և դաշինս հաստատեցաք յաւիտենական 'ի միջի մերում առաջի փառաց փայտի Նշանիս Քրիստոսի, արիական Լատինացիքս և անյաղթելի Թորգոմացիքս: Եւ յաղագս հաւատարմութեան հաստատուն և անջնջելի ուխտիս մերոյ, զահագին և զանգին արիւնն Քրիստոսի 'ի մեզան խառնեալ՝ գրեցաք ֆրերք միմեանց՝ արևմտեան և արևելեան ազգքս, որ հաւատ և սէր և միաբանութիւն պարտիմք միմեանց՝ որպէս եղբայրացելոցն Քրիստոսի Աստուծոյ՝ ճգնելով 'ի վերայ միմեանց մահու չափ, և մեռանելով յօժարութեամբ 'ի վերայ միմեանց, սիրելեացն՝ սիրելի, և թշնամեացն՝ թշնամի լինելով»: (Ադաթ. 334. տիպ Կոստ.):

Ահա այս Ադաթանգեղոսէն առնելով կրգրէ Յովհաննէս վարդապետ՝ մականուանեալն Ա՛անական՝ իւր Հարցմանց ճառին մէջ, եթէ «Զորեքին նոքա (այս է՝ սուրբն Սեղբեստրոս Հայրապետն

Հռովմայ, և սուրբն Գրիգոր Հայրապետն մեր, և երկու արքայք՝ Կոստանդիանոս և Տրդատ) Քրիստոսի արեամբն 'ի մեղան խառնեալ՝ գրեցան եղբարք»։

Ասոր նման կրկկայեն և այլ երկու Պատմիչներնիս, Վարդան Բարձրբերդացին և Կիրակոս Գանձակեցին, որք յիշեալ վանականի աշակերտներն էին։ Ասոնցմէ առաջինն կը գրէ «Զոր (այսինքն՝ զհաւատաւն Կոստանդիանոսի 'ի Քրիստոս) լուեալ Տրդատայ և սրբոյն Գրիգորի՝ չոգան առ նա եօթանասուն հաղար հեծելաւք, և եղեն դաշնադիրք միմեանց...։ Ելին երկու արքայքն և երկու պապքն՝ Գրիգոր և Սեղբեստրոս՝ դաշն ուխտի, կեալ և մեռանել 'ի միմեանց վերայ։ Զգիր ուխտին, ասեն, 'ի գրեն թացին յահաւոր խորհուրդն» ('ի Պատմ.)։ Եւ երկրորդն ևս՝ անոր համաձայն. «Գնալ եղև նմա (այսինքն՝ սրբոյն Գրիգորի) ընդ մեծի արքային Տրդատայ 'ի Հռովմ 'ի տեսութիւն նշխարաց սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և մեծի թագաւորին Կոստանդիանոսի և սրբոյ հայրապետին Սեղբեստրոսի, դնել ուխտս և դաշինս 'ի միջի իւրեանց» ('ի սկզբան Պատմ.)։

Հիմա այս վկայներուն տուած հաստատութեա՞նը նայիմք, եթէ Մխիթարեանց տպած Ագաթանգեղոսի վերջը այն Դաշանց թուղթը վերցնելուն նայելով՝ ըսենք թէ շինծու է և անտեղի, ևն։

Մխիթարեանք ակամայ կամք կողմնապահութիւն ընելու երբեմն սովորեցան. վասն որոյ ճշմարտութիւնը կամ լռութեամբ ծածկելու փոյթ ունեցան, և կամ մթին ու երկդիմի բառերով նսեմացուցին։ Ի՞նչպէս ընեն. թէ որ այս ստգտանելի խոհմութիւնը չընեն, ազատութիւններին ու հանգստութիւններին հարկաւ պիտի կորսնցնեն, և հաճելի չերևնան պիտի Փրոբականտայու ժողովոյն առջևն և անոր երեքտասան կարդինալներուն ներկայութեանը։

Ազէկ գիտեն Մխիթարեանք, որ այն Դաշանց թուղթին մէջը քանի մի պարբերութիւններ կան, որոնք անհաճոյ երևցած են Փրոբականտայի նորանոր դրութիւններուն։

Գիտեն ևս՝ որ Լատիներէն թարգմանուած այն Դաշանց թուղթին օրինակը՝ որն որ Պիոս չորրորդ պապէն վկայուած ու հաստատուած է, Միլանու Ամբրոսեան գրատանը մէջ անելանելի արգելեալ կը մնար։ Ասոր համար ընդարձակ կը գրէ Հռելանդոս պատմաբանը. (հատոր ժԵ)։ Բայց այժմ գիտեն՝ որ նոյնը Խտալական թարգմանուած ու հրատարակուած է Եւրոպայի մէջ. և

հարկաւ կարդացած են Դաբելեթի հեղինակէն թարգմանած Պերքաւթէլի եկեղեցական պատմութիւնը, որուն մէջ յատուկ ընդարձակ ծանօթութեամբ կը հաստատէ Դաշանց թուղթը. (հատ. ա. գիրք է. համ. 48. երես 332—335. տպուած Թոսքանայի Գրենձայ մայրաքաղաքը յամի Տեառն 1242)։

Այս և չե՞նմի գիտեր Մխիթարեանք, թէ այս Դաշանց թուղթը Հռովմայու Վատիկանու գրատան առաջին գրապետ՝ Ովրատիոս Յուստինեանը՝ կը վկայէ Փլորենտեան ժողովոյն վրայ ըրած խորհրդածութեանը մէջ, որ 'ի Հռովմ տպուած է 'ի Թուականին 1838 (երես 369), թէ այս Դաշանց թուղթը ձեռագրի մը մէջ մինչև հիմայ կայ։ Ահա այս թուղթը Միներ Դաղղիացի քահանայն Փարիզ տպած է՝ մեծին Կոստանդիանոսի գործոց կարգը. որով կը հաստատէ, թէ այն Դաշանց թուղթը՝ մեծին Կոստանդիանոսի օրովը գրուած է։

Դիտեն այս պատուելիները, որ սրբոյն Ներսեսի Շնորհալւոյն ընդհանրական ու եկեղեցական գրքերնուս մէջը բնաւին մերժելի ու ժխտելի բան մի չկայ, բայց բոլորը եթէ հաւատարմութեամբ տրպելու ըլլային, հարկաւ պիտի տպէին «Սահմանք Հաւատոյ» անուանեալ ճառօրէն գրուած ընտիր և ուղղափառ վարդապետութիւնը, և անոր հետը՝ եկեղեցւոյ աւանդութեանցը վրայ այն ողջամիտ գրութիւնը։ Վասն որոյ ասոնք մէկ դի ձգելով՝ և Շնորհալւոյն ընդհանրական մատենագրութեանը անունը անգամ ծածկելով՝ կողմնակցութեան ու աչառութեան խորհրդով՝ անուանեցին այն տպուած մատենին անունը՝ «Նոմոկանոն Ներսեսի Շնորհալւոյ, Գրիգորի կամ Ներսեսի Լամբրոնացւոյն»։

Ասոնք բոլորը աչառութեան հոգւոյն թելադրութիւն կը համարուին, որ թէպէտ աշխարհի մարդկանց հաճելի կերևնայ՝ իբրև գործ խոհեմութեան, բայց առաջի ճշմարտութեան առնին Աստուծոյ Ամենակալի կը պարտաւորի (Պաղմ. ծբ. 7—8։ Դաղ. ա. 10։ Եւ Պարգիս շնորհ. 'ի Մեկն. Յակ. բ. 1—ճառ ղ)։

Ահա այս ամեն աչառութիւնը և մարդկային սնոտի երկիւղը մերժելով Ղամշեան Հ. Միքայելը, Դաշանց թղթոյն ստուգութեանը համար շատ վկայութիւններ յառաջ բերելով կը գրէ. ոչ միայն Հայոց Պատմութեան բազմաշխատ գործին մէջ մատենագրելով (հատ. ա. երես. 642 մինչ 'ի 644). այլ և «Վահան հա-

ւատոյ ուղղափառութեան ազգիս Հայոց» անուամբ՝ ուղիղ դիտողութեամբ շարադրուած գրքին մէջ այսպէս գրած է՝ Դաշանց թղթին համար «Հայք կամակար մոռք ընդունին զայս թուղթ, որոյ և մեծ և անդրժելի նշանակ այն իսկ է, զի Հայք յաւէտ զգուշութեամբ պահեալ են զօրինակ ռօզար թղթոյ 'ի մէջ իւրեանց քան թէ Հռովմայեցիք, առ որս գոյր և օրինակ նորուն յաւուրս Սեղբեստրոսի։ Լատինք անհոգութեամբ կորուսեալ են զայն, իսկ Հայք ոչ միայն չեն կորուսեալ, այլ և զի մի արդեօք կորիցէ երբէք, առեալ տպագրեալ են զնոյն, և տրեալ են այսր անդր, և ամենայն Հայք որպէս ընդունին զմատեան Ագաթանգեղոսի քարտուղարին մեծին Տրդատայ, ընդ նմին և զայն թուղթ իրբև մասն նորին ընդունին» (գլ. Ե)։

Ինչո՞ւ համար անհոգացան և չեն հետևիր մինչև յայսօր այն Հռովմայ կորուստը գտնել, ոչ գահակալքն Հռովմայ, ոչ կարդինալքն Փրոբականտայու, և ոչ ընկերութիւնն Յիսուսեան։ Ասոր պատճառը անհոգութիւն չէ, այլ՝ յայտնի նախանձ։ Վասն զի այն Ագաթանգեղոսին գրչէն ելած ստուգապատում Դաշանց թղթին մէջի քանի մը պարբերութիւնները՝ արդարև յետոյ եկած կարդինալներուն նախանձուիլ տուին, և անոնց թելադրութեամբը զրգռուեցան վերջին դարերու Հռովմայ գահակալները նոյն թուղթին կորստեանը վրայ ներքին համոզմամբ ուրախանալու։ Ահա այս տեղս քանի մը պարբերութիւններ դնենք։ Նախ յայտնի կը լլլայ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Հռովմայ գահին մէջ հրամանահան ըլլալը, որուն կը վկայէ կայսրն Կոստանդիանոս յասելն. «Իսկ 'ի հրամանէ սրբոյ Լուսաւորչիս ազատեսցին գերեալք, արձակեսցին կապեալք, զերծցին բանտարկեալք, պատառեսցին մուրհակք պարտապանաց. դատ և իրաւունք ելցեն յաքքունուստ ամենայն որբոց և այրեաց և հայրենազրկաց։ Ընդ որս և աղ օրհնութեան հրամանաւ Լուսաւորչիս առաքեցաք ընդ ամենայն աշխարհ իշխանութեան մերում 'ի սպանդանոցս և յառանին զենլիս, զի մի հեթանոսաբար լեցի խրախութիւնս»։

Ընդանօր 'ի Հռովմ յայտնի եղաւ սրբոյ Հօրն մերոյ սքանչելի հրաշագործութիւնը՝ ըստ վկայութեան կայսերն Կոստանդիանոսի. «Դրեւեցաւ և յերկրի մերում հրաշք զարմանալի 'ի Հայրապետէս Հայոց, ես և 'ի Թագաւորէս։ Դանգի 'ի գալն նոցա առ մեզ և յանցանելն ընդ ծովն յունական, առաքեցի ես և ժո-

զովեցի զամենայն խեղս, զկաղս, զկոյրս, և զմիակողմանիս և զանդամալոյծս, և զայլ ամենայն՝ որ նեղեալ էին 'ի պէսպէս ցաւս և 'ի տանջանս, և զայսպիսի ժողովեալքս հանի ընդդէմ սրբոյն Գրիգորի, զորս միանգամ բժշկեաց զնոսա զամենեսեան սուրբն Գրիգոր աղօթիւք, մինչև զարմանալ մեր ամենեցուն 'ի վերայ ամենայնի՝ զոր արար Տէր նովաւ, և փառաւորեցաք զԲրիստոս զփառաւորիչն սրբոց իւրոց»։

Ա՛նաւանդ այն տեղ ակներև ամենեցուն փառաւորեաց Յիսուս Բրիստոս իւր կենդանի վկայ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ճգնողական վարուց հրաշալի մաքրափայլ սրբութիւնը և երկնահանդոյն շքեղութիւնը։ Երբ որ անմահ պատարագին փրկարար խորհուրդը կը կատարէր, այն տեղ անճառելի լոյս փառաց ծագեցաւ անոր վրայ, ինչպէս վկայեց սուրբն Սեղբեստրոս Հայրապետն Հռովմայ. «Մինչ դեռ կայաք, կրսէ, 'ի խորանին սուրբ, և զնուիրական աղօթսն մատուցանէաք, ահա յանկարծակի լոյս անճառելի և անբնտել 'ի մարդկեղէն բնութենէս՝ էջ յերկնից 'ի վերայ սրբոյ սեղանոյն, և աղեղնանման օդոք եօթն կրկին կամար կապեցաւ 'ի վերայ սրբոյն Գրիգորի. և արփափայլ փայլմամբ ճառագայթափայլեաց լոյս երեսաց նորա որպէս զդէմսն Բրիստոսի 'ի Թաբոր։ Իսկ մեք ամենեքեան ափշէաք՝ և ո՛չ իշխէաք հայել 'ի նա մինչև կատարեաց զսուրբ պատարագն, և 'ի փոքր մի փարատել շամանդաղ ամպոյն՝ ապա իշխեցաք մօտել և տալ նմա համբոյր 'ի սէր սրբութեան՝ ըստ օրինաց քրիստոնէից։ .... Ապա ասէ կայսրն՝ և ես Սեղբեստրոս. Ո՞վ երանելիդ 'ի հարս սուրբ Հայրապետ, որ անքուն և անհանգիստ կալուզ քո՝ նմանիս զուարթնոց երկնից, և անկերակուր կալուզ՝ զեր 'ի վերոյ զտանիս ամենայն հրեշտակաց։ Երդ աղաչեմք զքեզ, Ա՛ւնդ անսասանելի ամենայն աշխարհի, ուսո՛ մեզ զհաւատոյ մերոյ զդաւանութիւն, և աղօթեա՛ վասն ամենայն աշխարհի, և առաւել վասն մերոյ թագաւորութեան, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ փարեսցուք զկեանս մեր, և առաւել զտիեզերական իշխանութիւնս. և այս կենօքս վերին կենացն և երկնից ալքայութեանն արժանաւորեսցուք»։

Ապա այն կորուստը այլովքն հանդերձ չար ու վատ նախանձու հոգին պատճառեց, և անով՝ այն Դաշանց թուղթը անյայտ ընելու փոյթեր եղան. բայց ի՞նչ շահ». Զի՞նչ ինչ ծածուկ՝ որ ո՛չ յայտ լիցի, և ո՛չ գաղտնի՝ որ ո՛չ ծանիցի և եկեսցէ 'ի յայտ» (Ղուկ. ը. 17)։

Տեսէք չար նախանձու դառնադառն պտուղը. յիշեցէք այն բարոյական առածը թէ՝ «Ոչատատես աչաց է նշան՝ նեղել լուսով փայլման մերձաւորին։ Բուոյն ազգ չհանդուրժէ պայծառութեան լուսաւորին մեծի՝ յոր վայելեն արծուիք։ Բարիքն խընդակից լինին ընդ բարիս այլոց». (Տար. առած. 38)։

Թոռ նախանձու հոգին թելադրէ ու համոզէ հակառակասէր կամքերը յերանելեաց 'ի սրբոց վկայեալ Ամենակալին Աստուծոյ առջևը հաստատուած ու սաստիկ ուխտադրութեամբ կնքուած անանք մեկ դաշնադրութեան թուղթ մը անհետ ընել և 'ի կորուստ մատնել։

Թոռ կողմնակցութեամբ ու աչառութեամբ զարմանալի լռութեամբ մը բացայայտ ճշմարտութեան դէմը գոցեն։ Բայց դու ով ճշմարտասէր ընթերցող, տես թէ որպէս մեր բարեացապարտ ազգին՝ անոր յատուկ պաշտպանն Տէր Աստուած Ամենակալ՝ այն երանելի սրբոց Դաշնադրութիւնը իբրև գանձարան սիրոյ և միաբանութեան անկորուստ պահելու համար՝ կարողացուցեր է անընդհատ տպել և ընթեռնուլ մտառութեամբ, յիշելով մեծ Պահանայապետին մերոյ սրբոյ Հօրն Գրիգորի Լուսաւորչի հոգևոր փառաց և շնորհաց առաւելութիւնը և անհամեմատ բարեմասնութիւնները։ Ինչպէս որ մեծահաւատ Մահտեսի Ղանիկ բարեշատակ Ամիրայն հոգեսիրական և ազգասիրական փոյթ ունեցաւ վերատին ևս տպել տալ յամի Տեառն 1824 'ի պատրիարգութեան Կարապետ հոգելոյս Սրբազան Եպիսկոպոսի նոյն Եղանեղեղոս մատեանը՝ Դաշանց թուղթովը մեկ տեղ, որուն հին ձեռագիրը գտնելով Պալատցի իմաստասէր Գէորգ պատուելին՝ ընտրելագոյն գաղափարներու հետ բաղդատած էր, և նոյնը յիշեալ մահտեսի Ղանիկ Ամիրայն յանձնած մեծիմաստ Գրիգոր պատուելոյն, որ այն ալ ամենայն զգուշութեամբ վերատին քննելով և տպագրութեան սրբագրութիւնը ընելով՝ 'ի լոյս ընծայած է։

Արդ իրաւունք ունին ոմանք հարցանելու, եթէ Յունաց լեզուաւ գրուած Եղանեղեղոսի մատենագրութիւնը կայ և կը գտնուի Յունաց մէջ, ուրեմն ինչու համար այս Դաշանց թուղթը անոր հետ չտեսնուիր ու չգտնուիր։ Այո՛ ինդիր արժանաւոր։

Այս տարակոյսը կը լուծէ Եղիշէ սուրբ վարդապետանուս մատենագրութիւնը, որ ինչպէս վերը գրեցինք, կրպատմէ սրբոց Վարդանանց քաջ նահատակաց ժամանակը Յունաց կայսր Փոքր

Թէոդոսէն օգնութիւն խնդրելու համար՝ եկեղեցականաք և աշխարհականաք նամակ գրելնին՝ յիշեցնելով Նորին վեհափառութեանը յեշապակաբան Նախնեաց անուամբ այն Դաշանց Թուղթը, որովհետև Յունաց կայսերական գրատանը մէջ յեշապակաբան Նախնեաց անուամբ գրուած ու պահուած էր։

Արդա՛ ուրեմն մեր ազգին այն գրութիւնը, և Թէոդոս կայսեր անոր վրայով ըրած քննութիւնը՝ կայսերական գրատունէն բերած մատեաններով։ Ուսաջինին համար գրուած է Վարդանայ կողմանէ խրկուած գրին մէջ. «Որպէս և մեք ունիմք զանսուտ յիշատակարանն առաքինի նախնեացն ձերոց»։ Դ։ երկրորդ՝ կայսերական քննութեանը համար գրուած. «Դ։ (իբրև) ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանն նախնեաց, բազում մատեանք 'ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան 'ի նեղքս գտանէին» (Ղեղեշ նոր տիպ Վենետ. գլ. գ. երես 55)։

Հիմակ ասկէց կիմանանք՝ որ Յունաց կայսերական մատենագրութեանց մէջ՝ այս Դաշանց Թուղթը կը յիշատակուի ու կը գրուի յատուկ յեշապակաբան Նախնեաց անունով։ Թէ որ Ազաթանգեղոսի պատմութեանը հետ որոնեն՝ կարող պիտի չըլլան գտնելու։

Իսկ թէ որ յեշապակաբան Նախնեաց անունով ալ չգտնան, անշուշտ պիտի ըսեն, թէ այն մեծ հրկեզութեանը մէջ միւս ընտիր ընտիր մատեաններուն հետ հրոյ ճարակ եղած է. որուն վրայով կը պատմեն այս Յոյն պատմիչները, Կեդրենոս միայնակեաց և Օնոսարաս թէ՝ Կ. Պոլսոյ մեծ գրատունը Յունաց Օնոն կայսր ժամանակը այրեցաւ յամի Տեառն 476, որուն մէջ այրեցան, կըսեն, հարիւր քսան հազար գրեանք։

Կըպատմեն և այս Յոյն պատմիչները՝ Օնոսարաս, Կեդրենոս, ու Կոստանդին Մանասէ, թէ Դաւրայի Լեւոն ամբարիշտ պատկերամարտ կայսրը՝ երկոտասան ջերմեռանդ կրօնաւորները այրելու համար՝ սուրբ Սոֆիայ անուն տաճարին մերձ եղած իմաստասիրաց բնակութիւնը յանկարծ հրդեհել տուաւ յամի Տեառն 730, և անոր մէջ յիշեալ երկոտասան կրօնաւորները զոհ եղան ճշմարտութեան համար. զոհ եղան նմանապէս երեք հարիւր երեք հազար ընտիր մատեանները։

Հիմայ պիտի ըսենք, թէ որ այն Դաշանց Թուղթին օրինակը յեշապակաբան Նախնեաց անունով՝ Յունաց մէջ անհետ եղած է, ան-

տարակոյս այրածէ միւս այնչափ հաղարաւոր մատեաններուն հետ։

Թէ որ փոյթ ունին և կը ցանկան վերստին ձեռք բերելու իրենց կորուստը, կարող են թարգմանել տալ 'ի Հայկականէն 'ի Յոյն լեզու։

Ինչպէս Կեսարու Պաղեստինացւոյ Եւսեբիոս եպիսկոպոսին՝ եկեղեցական պատմաբանին Քրոնիկոնը (Ժամանակագրութիւնը) իսպառ կորսուած էր՝ կամ սոյն վերոյիշեալ հրկիզութեանց մէջ, և կամ անհոգութեամբ։ Բայց մեք ունէինք 'ի Հունականէն 'ի Հայ լեզու թարգմանուած մեր սրբազան թարգմանիչներէն, որով թարգմանուեցաւ 'ի Հայկականէն 'ի Յոյն լեզու 43 տարի յառաջ. և այսպէս ստացան իրենց բազմաժամանակեայ կորուստը։

Հակից կը հետևի՝ որ շատ անգամ անցեալ դարերու մէջ գրաւոր յիշատակութիւններուն և մատենագիրներուն կորուստը ապագայ ժամանակներու մէջ աւելակներէ և անծանօթ խորշերէ բաբեբաղդաբար երևան կելլէ. ինչպէս դարապատումներէն, հնախօսութիւններէն և օրագիրներէն կը լսենք ու կը կարդանք։

Հա այս օրերս կարդացինք Վենետիկի Մխիթարեանց Բազմավէպ օրագրին 16 Թիւը 15 Օգոստոս 1856, որուն մէջ նշանակուած է թէ՝ 'ի Հռոմ Հեղարինի անուն Դքսին պալատին դիւանի խորշերուն մէջը շատ հնագիր Լատիներէն լեզուաւ գրուած նամակ մը գտնուեր է, որն որ Լենտուլ-Պոբլիոս Հրէասատանի կուսակալը խրկեր է Տիբերիոս կայսեր՝ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ սքանչելի և զարմանալի տեսութեանը վրայով՝ անոր ծանօթութիւն տալու համար։

Արդ՝ երանի՛ թէ այսպէս բարեբաղդ ժամանակի մը հանդիպէր, որ Լատինական կամ Իտալական լեզուաւ թարգմանուած վերոյիշեալ Դաշանց թղթոյն օրինակները՝ ծածկուած խորշերէն յայտնուէին 'ի ծանօթութիւն ամենեցուն։ Այն ժամանակը՝ այս Դաշանց թղթոյն վրայով սխալ կարծեաց մէջ յամառեալներուն միտքը գուցէ համոզուին. որոց տացէ Տէր հոգի ճշմարտութեան 'ի փառս պաշտելի անուան իւրոյ։

ՎԵՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Ապա կնքենք այս տեղ փոքր 'ի շատէ խորհրդածութիւններս Դաշանց թղթոյն ստուգութեանը վերայով. ինչու որ որչափ մեր տկար մտաց դատողութիւնը վերահաս եղած էր, հաստատուեցաւ վաւերական վկայութեամբք արժանահաւատ և ճշգրտաբան ազգային մատենագիրներուն։

Ուստի թէ որ մեր բարեմիտ և բանասէր հոգևորականաց և աշխարհականաց հաճելի ըլլայ այս փոքր աշխատութիւնս, պատիւն ու յարգը մեր անձին չի վերաբերիր, այլ յաւէտ մեր ճշգրտապատում մատենագիրներուն։

Դարձեալ՝ հարկ է մեզի ճանչնալ Աստուածային տեսչութեան մանաւոր ու մեծամեծ շնորհացը այն գործողութիւնը, որն որ բարեպաշտ ազգիս լրութեանը վերայ մշանջենաւորած ըլլալով՝ ժամանակ ժամանակ փոյթ ունեցեր են բարենախանձ առաջնորդները, ուսումնական պատուելիները և ազգասէր բարեպաշտ իշխանները ձեռք բերած և ունեցած նախնի սուրբ հարց գրաւոր արդիւնքները և եկեղեցական պատմութիւնները տպագրել տալ, զորոնք կը վայելէ սիրելի ազգիս լրութիւնը. և փառք գոհութեամբ հանդերձ կը վերընծայէ առ Տէր Յիսուս Քրիստոս Փրկիչն մեր, ճանաչելով և խոստովանելով զնոյն ինքն օգնական ու պաշտպան իւր վերայ, որով զինքը երանելի կը համարի ըստ մարգարէին Դաւթի. «Երանի Ազգի՝ որոյ Տէր Աստուած օգնական է նմա» (Սաղմ. ԼԳ. 10)։

(Հանիւլ 'է ՃԵ և ԺԶ երրորդ տեսրակաց ճառատալի ՌՑԺ հայոց թուականին)։

Въ Тип. Лаз. Инс. вос. яз. Печатать позволяется С. Петербургъ 19-го Января 1861 г.
Цензоръ В. Бекетовъ.

(Изъ 15 и 16-го выпусковъ «Литературнаго Сборника» 1861 года).